Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
04 սեպտեմբերի 2025 թ. թիվ 211 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրությամբ)

1. Սույն կարգով սահմանվում են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետև՝ Կենտրոն) առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգն ու պայմանները: Հեռավար ուսուցման մագիստրատուրայի ընդունելության կարգն ու պայմանները սահմանված են «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրեդիտային համակարգով հեռավար ուսուցման ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգով:
2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», Կենտրոնի կանոնադրությունը, այլ իրավական ակտեր:
3. Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի կրթական աստիճան և բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձև է:
4. Չի թույլատրվում պարտադիր ժամկետային զինծառայության կամ պայմանագրային զինծառայության մեջ գտնվող անձանց առկա ձևով ուսուցումը Կենտրոնի մագիստրատուրայում:
5. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով Կենտրոնի տնօրենի նախագահությամբ ձևավորվում է ընդունող հանձնաժողով: Քննությունների և հարցազրույցների անցկացման համար Կենտրոնի տնօրենի հրամանով ձևավորվում են նաև առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվում են տվյալ ամբիոնի վարիչը և համապատասխան դասախոսները:
6. Մագիստրատուրայի **առկա ուսուցմամբ անվճար համակարգ** կարող են դիմել տվյալ մասնագիտությամբ ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բուհերի բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք, ովքեր ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացել են առնվազն 14 (20 բալանոց համակարգ) միավոր, իսկ ավարտական փաստաթղթի՝

դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը /ՄՈԳ-ը/ առնվազն 14 է: Մրցութային քննությունն անցկացվում է ըստ նախապես հրապարակված մասնագիտական հարցաշարի:

7. Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արդյունքների հիման վրա: Մրցութային քննության արդյունքների հավասարության դեպքում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում

ա) նախորդ կրթական մակարդակի ՄՈԳ-ը,

բ) մասնագիտական առարկաներից ցուցաբերած ՄՈԳ-ը

գ) հրապարակված գիտական հոդվածները,

դ) ընթացիկ տարվա շրջանավարտ կամ բանակից զորացրված լինելու հանգամանքը,

8. Մագիստրատուրայի **առկա և հեռակա ուսուցմամբ վճարովի համակարգ** կարող են դիմել ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բուհերի շրջանավարտները: Նույն մասնագիտությամբ դիմորդների ընդունելությունը կատարվում է հարցազրույցով, եթե նրանց դիպլոմի հավելվածում գրանցված ՄՈԳ-ը առնվազն 14 է (կամ տվյալ բուհում սահմանված առավելագույն գնահատականի առնվազն 70 տոկոսը) կամ մրցութային՝ քննության ձևով, եթե ՄՈԳ-ը 14-ից ցածր է, կամ դիմել է իր մասնագիտությանը հարակից մասնագիտություններից որևէ մեկով: Քննությունը կամ հարցազրույցը անց են կացվում ըստ նախապես հրապարակված մասնագիտական հարցաշարերի:

9. Մասնագիտության փոփոխության պարագայում ընդունելությունը կատարվում է միայն վճարովի համակարգում: Ընդունելության վերաբերյալ որոշումները կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արդյունքների հիման վրա:

10. «Իրավագիտություն» մասնագիտությամբ վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Իրավագիտություն» և դրան

հարակից մասնագիտությամբ բարձրագույն կրթություն կամ գիտական աստիճան ունեցող դիմորդները:

11. «Ֆարմացիա» մասնագիտությամբ անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել միայն «Դեղագիտություն» և «Դեղագործական քիմիա» մասնագիտության շրջանավարտները, իսկ վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Դեղագիտություն», «Դեղագործական քիմիա» և դրանց հարակից մասնագիտությունների շրջանավարտները:
12. Մագիստրատուրա ընդունվելու համար դիմորդները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ (անձամբ ներկայացնելու դեպքում ներկայացնել նաև նշված փաստաթղթերի պատճենները) կամ առցանց դիմում են ներկայացնում հետևյալ հղմամբ՝ https://www.isec.am/online-admission-form, կցելով ստորև նշված փաստաթղթերի սքանավորված տարբերակները.

- անձնագիր/նույնականացման քարտ,
- բարձրագույն կրթության դիպլոմ և հավելված,
- 3x4 չափի լուսանկար, (2 հատ)
- կցագրման վկայական կամ զինվորական գրքույկ,
- հրատարակված գիտական հոդվածների ցանկ (առկայության դեպքում),
- արտասահմանյան բուհի դիպլոմ ներկայացնելու դեպքում դիպլոմի հետ պետք է ներկայացնել նաև «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից» տեղեկանք՝ դիպլոմի համարժեքության մասին:

13. Մագիստրատուրայի դիմում-հայտերի ընդունումը կատարվում է հետևյալ ժամկետներում.
    - առկա անվճար համակարգ՝ համաձայն լիազոր մարմնի կողմից սահմանված ժամանակացույցի,
    - առկա վճարովի համակարգ՝ մայիսի 19-ից օգոստոսի 23,
    - հեռակա վճարովի համակարգ՝ մայիսի 19-ից հոկտեմբերի 11,

- հեռավար վճարովի համակարգ՝ մայիսի 19-ից օգոստոսի 30:

14. Մագիստրատուրայի ընդունելության քննությունները/ հարցազրույցները կազմակերպվում են հետևյալ ժամկետներում.
    - առկա անվճար համակարգ՝ համաձայն լիազոր մարմնի կողմից սահմանված ժամանակացույցի
    - առկա վճարովի համակարգ՝ օգոստոսի 26-28-ը,
    - հեռակա վճարովի համակարգ՝ հոկտեմբերի 14-ից 18-ը,
    - հեռավար վճարովի համակարգ՝ սեպտեմբերի 2-4-ը:
15. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է տարեկան վարձի առնվազն 20%-ը վճարելուց հետո: